ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 մայիսի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

62
(3271)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ԹԵՂՈՒՏ»-Ը ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ԹՈՓ 10-ՈՒՄ

Պետեկամուտների կոմիտեի հրապարակած տվյալների համաձայն՝ 2026 թվականի հունվար-մարտ ամիսներին Հայաստանի 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում «Թեղուտ» ՓԲԸ-ն զբաղեցրել է 10-րդ տեղը: Թվում է՝ խոսքը հաջողված արտադրական գործունեություն ունեցող ընկերության մասին է, սակայն «Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս ցուցանիշի հետեւում կանգնած է տարիներով կուտակված հակասություններով, դադարներով եւ քննադատություններով լի մի պատմություն:

«Թեղուտ» ՓԲԸ-ն հիմնադրվել է 2006 թվականին՝ Լոռու մարզում գտնվող պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման նպատակով: Այն համարվում է Հայաստանի երկրորդ խոշոր պղնձի եւ մոլիբդենի հանքավայրը՝ շուրջ 450 մլն տոննա հանքաքարի պաշարներով: 2006-2013 թվականներին կառուցվել է լայնածավալ լեռնահարստացման կոմբինատ ավելի քան 700 հա տարածքում, որի զգալի մասը՝ 357 հա, անտառային ֆոնդ էր: 2014-ին հանքը հանձնվեց շահագործման եւ արագ դարձավ ոլորտի առանցքային խաղացողներից մեկը՝ ապահովելով հազարավոր աշխատատեղեր: Սակայն «Թեղուտ»-ի գործունեությունը չի եղել կայուն.

- 2018 թվականին այն դադարեցվել է պոչամբարի կայունության ռիսկերի պատճառով,
- 2019-ին՝ վերագործարկվել,
- 2022 թվականի մարտից մինչեւ 2023-ի հուլիս՝ կրկին կանգ է առել՝ արդեն աշխարհաքաղաքական եւ տնտեսական խնդիրների հետեւանքով: Ընկերությունը պնդում է, որ այդ ընթացքում իրականացրել է լայնածավալ տեխնիկական արդիականացումներ, ավտոմատացման ծրագրեր եւ պոչամբարի անվտանգության բարձրացման աշխատանքներ:

2023 թվականի օգոստոսից ընկերությունը կրկին ամբողջ ծավալով աշխատում է:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



Իրանի արտգործնախարարության խոսնակ Էսմայիլ Բաղային հայտարարել է, որ ԱՄՆ-ի հետ բանակցությունները շարունակվում են Պակիստանի միջնորդությամբ, սակայն Իրանի իրավունքը՝ ուրանի հարստացման հարցում, սակարկման ենթակա չէ: Շաբաթական մամուլի ասուլիսի ընթացքում Բաղային նշել է, որ ուրանի հարստացման թեման վերջին երկու տարիներին բազմիցս քննարկվել է, սակայն Թեհրանը մշտապես ընդգծել է, որ այդ հարցում վերանայման հիմքեր չկան: Նրա խոսքով՝ բանակցային գործընթացը շարունակվում է. Իրանը ներկայացրել է իր «14 կետանոց ծրագիրը», որից հետո ամերիկյան կողմը հայտնել է իր մտահոգությունները, իսկ Թեհրանը կրկին ներկայացրել է իր դիրքորոշումները: Բաղային հայտնել է, որ Իրանը Պակիստանի միջնորդների միջոցով ստացել է վերանայված առաջարկների փաթեթ, իսկ երկու օր առաջ Թեհրանն իր հերթին փոխանցել է իր պատասխան դիրքորոշումը: «Իրանի՝ Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագրով նախատեսված ուրանի հարստացման իրավունքը ճանաչված է եւ որեւէ այլ կողմի հաստատման կարիքը չունի»,- հայտարարել է նա:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



Ընտրողների ռեգիստրում ընդգրկված է 2.483.520 ընտրող: Այս մասին հայտնել են Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունից: «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Ազգային Ժողովի ընտրությունների ժամանակ՝ քվեարկության օրվանից առաջ 30-րդ, 20-րդ եւ 10-րդ օրը, բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը հրապարակում է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը՝ նշելով նաեւ ըստ գտնվելու վայրի ընտրողների, նախընտրած վայրի ընտրողների եւ հաշվառում չունեցող ընտրողների թիվը: 2026թ. հունիսի 7-ին կայանալիք Ազգային Ժողովի ընտրությունների օրվանից առաջ 20-րդ օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը կազմել է 2.483.520, որից՝ ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասերում ընդգրկված ընտրողների թիվը՝ 2.925, հաշվառում չունեցող ընտրողների թիվը՝ 69»,- նշվում է հաղորդագրությունում:



Հայաստանում սպասվող համապետական ընտրություններին ընդառաջ՝ նոր հարցեր ու մտահոգություններ են առաջացել անձնական տվյալների հնարավոր արտահոսքի եւ ընտրական տրամադրությունների ուսումնասիրության շուրջ: ArmLur.am-ը քաղաքացիներից ահազանգեր է ստանում, որ «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն»-ի հայաստանյան գրասենյակը զանգահարում է արցախցիներին եւ իբր սոցիոլոգիական կամ հետազոտական նպատակներով հավաքագրում զգայուն անձնական տվյալներ: Ըստ ահազանգերի՝ զանգերի ընթացքում նախ տրվում են մի շարք ճշտող հարցեր. ե՞րբ են քաղաքացիները տեղահանվել Արցախից, ի՞նչ ընտանիք ունեն, քանի՞ անդամ է բնակվում ընտանիքում, Հայաստանի ո՞ր մարզում են ապրում, ի՞նչ ազգության են իրենց համարում, որքանո՞վ են հպարտ իրենց ազգային պատկանելիությամբ, ստացել են արդյո՞ք ՀՀ քաղաքացիություն եւ անձնագիր: Միայն դրանից հետո, ըստ քաղաքացիների, հարցումն անցնում է քաղաքական դաշտ՝ ում են պատրաստվում աջակցել հունիսի 7-ին նախատեսվող համապետական ընտրություններում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՍՏԱԿ Է»

Armlur.am-ը զրուցել է Հայաստանի վարչապետի գլխավոր խորհրդական Լիլիթ Մակունցի հետ:

- Ինչպե՞ս եք գնահատում քարոզարշավը, ի՞նչ տպավորություն ունեք մարդկանց հետ շփումներից, եւ ի՞նչ պատկեր եք տեսնում հունիսի 7-ի համար:

- Դեռեւս դժվար է այս պահին հստակ գնահատական տալ հունիսի 7-ի քվեարկության արդյունքների վերաբերյալ, բայց մեր քաղաքացիների հետ շփումների ընթացքում մենք անում ենք առավելագույնը՝ համոզելու նրանց, որ ընտրություն կատարելիս աջակցեն հենց «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը: Մենք նաեւ ներկայացնում ենք, թե ինչու պետք է այդ ընտրությունը կատարվի մեր օգտին: Հավանաբար դուք էլ եք նկատել, որ քարոզարշավի ընթացքում վարչապետի հիմնական շեշտադրումները շատ հստակ են, եւ հենց այդ շեշտադրումներով էլ մենք շփվում ենք քաղաքացիների հետ: Քաղաքացիները բավական ակտիվ են, ընդ որում՝ եթե համեմատենք 2021 թվականի արտահերթ ընտրությունների հետ, այն համայնքները, որոնք այն ժամանակ ավելի պասիվ էին, այժմ ցուցաբերում են բավականին մեծ ակտիվություն:

- Տիկին Մակունց, վերջին շրջանում Ռուսաստանից հաճախ են հնչում գնահատականներ Հայաստանի վերաբերյալ: Նախագահի մակարդակով էլ նշվեց, որ Հայաստանը պետք է ընտրություն կատարի՝ կամ դուրս գալ ԵԱՏՄ-ից եւ գնալ դեպի Եվրամիություն, կամ մնալ ԵԱՏՄ-ում: Կամ արդյոք նման որոշում, եւ ինչպե՞ս եք պատկերացնում հարաբերությունները ԵԱՏՄ-ի եւ ԵՄ-ի հետ:

- Հայաստանի Հանրապետությունը եւ մեր կառավարությունը արտաքին քաղաքականության վերաբերյալ հստակ դիրքորոշումներ են ամրագրել թե՛ կառավարության ծրագրում, թե՛ մեր նախընտրական ծրագրում: Մենք շարժվում ենք քաղաքականության բազմազանեցման ճանապարհով՝ խորացնելով հարաբերությունները ինչպես արեւմտյան, այնպես էլ տարածաշրջանային գործընկերների հետ:

- Իսկ ինչպե՞ս է հնարավոր լինելու պահպանել այդ բալանսը:

- Եթե խոսում ենք տարբեր պետությունների, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության մասին, ապա պետք է նկատենք, որ Ռուսաստանը եւս ունի տարբեր երկրների հետ հարաբերություններ՝ անկախ նրանից, թե տվյալ փուլում այդ պետությունները որքանով են բարեկամական քայլեր արել Հայաստանի նկատմամբ: - Միջազգային հարաբերություններում պետությունները առաջնորդվում են իրենց շահերով, եւ Հայաստանը նույնպես առաջնորդվում է իր պետական շահերով: Մենք շարունակելու ենք հարաբերությունները մեր ավանդական դաշնակիցների հետ՝ միաժամանակ ընդլայնելով համագործակցության շրջանակը՝ ունենալով այլընտրանքներ անվտանգության, տնտեսության, էներգետիկայի եւ այլ ոլորտներում:

- Իշխանության լինելու պարագայում ինչպե՞ս եք իրականացնելու ԵՄ անդամակցության գործընթացը: Իրատեսակա՞ն է դա այս պահին Հայաստանի համար:

- Կարծում եմ՝ այս պահին պետք չէ քննարկել այնպիսի թեմաներ, որոնք դեռեւս օրակարգում չեն գտնվում: Մեր քաղաքականությունը հստակ է. Ազգային Ժողովն ընդունել է համապատասխան նախագիծ, որը խորացնում է ինտեգրումը Եվրամիության հետ: Իսկ թե հետագայում ինչ զարգացումներ կլինեն, դա կախված կլինի նաեւ մեր ժողովրդի դիրքորոշումից:

- Եւ վերջին հարցը. ի՞նչ եք կարծում, Ռուսաստանը ինչպիսի՞ հետաքրքրվածություն ունի Հայաստանի ընտրությունների նկատմամբ, եւ ի՞նչ դիրքորոշում ունի:

- Ես չեմ կարող այլ պետության փոխարեն պատասխանել նման հարցերի:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԴԻՄՈՒՄ Է ԳՐԵԼ

Երեկ Արաբկիր վարչական շրջանում նախընտրական քարոզարշավի ընթացքում տեղի ունեցած միջադեպից հետո ArmLur.am-ը կապ է հաստատել բժշկական գիտությունների թեկնածու, մանկաբարձ-գինեկոլոգ Արփինե Սողոյանի դստեր՝ փաստաբան Տաթեւիկ Սողոյանի հետ՝ պարզելու տեղի ունեցածի հետեւանքներն ու ստեղծված իրավիճակը:

Տաթեւիկ Սողոյանի փոխանցմամբ՝ իր մայրը այս պահին չի ցանկանում հրապարակային մեկնաբանություն տալ, սակայն, նրա խոսքով, ակնհայտ է, որ իշխանությունները չեն հանդուրժում իրենց քաղաքականությանը հակառակ կարծիք հայտնող քաղաքացիների ներկայությունը:

«Իմ մայրն ունի բավարար իրավագիտակցություն եւ առանց իրավական հիմքերի ազատման դիմում չի գրի: Այս պահին մայրս արձակուրդի դիմում է գրում»,- նշել է նա՝ անդրադառնալով հնարավոր աշխատանքային ճնշումներին:

Սողոյանի խոսքով՝ բուժհաստատությունից այս պահի դրությամբ որեւէ պաշտոնական հրաման կամ որոշում չկա, եւ ինքը չի կարծում, որ նման քայլի կգնան, քանի որ իր մայրը հղիների բաժանմունքի միակ պատասխանատու բժիշկն է:

Հիշեցնենք, որ երեկ Արաբկիր վարչական շրջանում Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ նախընտրական հանդիպման ընթացքում վիճաբանություն էր տեղի ունեցել վարչապետի եւ քաղաքացու միջեւ: Քաղաքացին դժգոհություն էր հայտնել կառավարության վարած քաղաքականությունից, ինչին ի պատասխան՝ վարչապետը կոշտ արձագանք էր տվել:

Միջադեպից հետո Տաթեւիկ Սողոյանը նաեւ գրառում էր կատարել ֆեյսբուքյան իր էջում՝ նշելով, որ իր մայրը ոչ միայն բժիշկ է, այլ նաեւ 44-օրյա պատերազմում բռնի անհետացած փոխգնդապետ բժիշկ Հրանտ Պապիկյանի քույրը:

«Մայրիկս էությանս առանցքն է ու պայքարիս մոտիվացիայի աղբյուրը: Ինչպես շատերդ ճանաչեցիք, այսօրվա հերոսը մայրիկս էր՝ բժշկական գիտությունների թեկնածու մանկաբարձ-գինեկոլոգ Արփինե Սողոյանը»,- գրել էր նա:

ԻՐԻՆԱ ԱՏԱՆՅԱՆ

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է COP17–ԻՆ

Երեւանի կենտրոնում արդեն տեղադրվել է #COP17-ի տարբերանշանը՝ ազդարարելով մեր երկրի կարեւոր ճանապարհը դեպի ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողով:

Հոկտեմբեր ամսին Երեւանը կհյուրընկալի աշխարհի տարբեր երկրների պատվիրակությունների, միջազգային կազմակերպությունների եւ բնապահպանական ոլորտի ներկայացուցիչների՝ դառնալով կենսաբազմազանության պահպանության շուրջ գլոբալ քննարկումների կարեւոր հարթակ: Հայաստանը շարունակում է ակտիվ նախապատրաստական աշխատանքները՝ համաժողովը բարձր մակարդակով կազմակերպելու ուղղությամբ՝ արժանապատվորեն ներկայացնելով մեր երկիրը միջազգային բնապահպանական օրակարգում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԻՆՉ Է ԱՆՈՒՄ ՊՐՈՌԵԿՏՈՐԸ

Մինչ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանը հայտնվել է հերթական աղմկահարույց կոռուպցիոն սկանդալի կենտրոնում, բուհի պրոռեկտոր Գեւորգ Հակոբյանը Երեւանի փողոցներում իշխանական քարոզչությամբ է զբաղված: Մի կողմում Հակակոռուպցիոն կոմիտեի հաղորդագրությունն է, ըստ որի՝ համալսարանի ամբիոններից մեկի վարիչն ու դասախոսական կազմից մի շարք անձինք ձերբակալվել են կաշառք տալու եւ ստանալու մեղադրանքով: Մյուս կողմում նույն համալսարանի պրոռեկտորն է՝ մարդկանց ՔՊ-ի բուկլետներ բաժանելիս, ժպտալիս, ձեռք սեղմելիս ու քաղաքական քարոզչական նյութեր փոխանցելիս: Ակամա հարց է առաջանում՝ ի՞նչ է կատարվում Բրյուսովի համալսարանում: Հակոբյանի կոստյումին էլ Նիկոլ Փաշինյանի բաժանած քարտեզն է: Եւ այս ֆոնին հասարակության մոտ կասկածներն ավելի են խորանում: Իհարկե, ոչ ոք չի պնդում, թե պրոռեկտորը կապ ունի կաշառքի գործի հետ: Բայց երբ նույն բուհում դասախոսներ են ձերբակալվում, իսկ ղեկավար կազմի ներկայացուցիչը այդ ընթացքում իշխանության քարոզարշավով է զբաղված, հարցերը դառնում են անխուսափելի:



Ամենացավալին այն է, որ այս ամենը տեղի է ունենում կրթական հաստատությունում, որտեղ մարդիկ պետք է կրթության, գիտելիքի ու արժեհամակարգի կրող լինեն: Փոխարենը հանրությունը տեսնում է մի համակարգ, որտեղ մի մասը քրեական գործերով է անցնում, մյուս մասը՝ փողոցային քաղաքական ակտիվիզմով զբաղվում:

Այս ամենից հետո ուսանողը ինչպե՞ս հավատա կրթական համակարգին: Ինչպե՞ս հավատա համալսարանին, եթե նույն բուհում քննությունները վերածվում են քրեական գործերի, իսկ ղեկավարությունը՝ քաղաքական քարոզչության գործիքի:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«ՊԵՏՔ Է ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵՆՔ»

«Մենք հունիսի 8-ին, որպես պետություն, պետք է ներողություն խնդրենք Հայ առաքելական եկեղեցուց». այս մասին հայտարարել է Էդմոն Մարուքյանը: Մայիսի 17-ին «Լուսավոր Հայաստան» կուսակցության քարոզարշավի հերթական օրը մեկնարկել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Էդմոն Մարուքյանը հիշեցրել է, որ ՀՀ Սահմանադրությամբ պետությունը չի կարող միջամտել մարդկանց խղճի եւ դավանանքի ազատությանը, ինչպես նաեւ եկեղեցու ներքին գործերին: Նրա խոսքով՝ գործող իշխանությունը՝ ի դեմս Նիկոլ Փաշինյանի, ոտնահարել է այդ հիմնարար ազատությունները եւ թույլ տվել միջամտություն Հայ առաքելական եկեղեցու ներքին կյանքին: «Լուսավոր Հայաստան» կուսակցության նախագահը շեշտել է, որ պետությունը պարտավոր է վերադառնալ սահմանադրականության, փոխադարձ հարգանքի եւ ինստիտուցիոնալ հավասարակշռության սկզբունքներին: Քարոզարշավի ընթացքում ելույթ է ունեցել նաեւ Կարպիս Փաշոյանը՝ նշելով. «Որն է տարբերությունը նիկոլական տեռորի եւ բոլշեւիկյան տեռորի միջեւ. բոլշեւիկները պայթեցնում եւ սպանում էին, իսկ սրանք ավելի հեռու են գնացել, որովհետեւ սրանք արժեզրկում եւ հեղինակազրկում են: Քանի որ արյունով եւ երկաթով հնարավոր չէ ինչ-որ բան արմատախիլ անել, իսկ հեղինակազրկելով եւ մարգինալացնելով՝ հնարավոր է»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՍՊԱՌՆԱՑԵԼ ԵՆ ԱՊԱԱԿՏԻՎԱՑՆԵԼ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲԱԶԱՆԵՐԸ

ԱՄՆ ռազմական բազաները Պարսից ծոցի հարավում մոտ ժամանակներս կանջատվեն, հայտարարել է Իրանի զինված ուժերի «Խաթամ ալ-Անբիա» կենտրոնական շտաբի խոսնակ Էբրահիմ Զոլֆաղարին: «Վերջին 24 ժամվա ընթացքում ԻՀՊԿ-ի ռազմածովային ուժերը ոչ մի նավի թույլ չեն տվել անցնել Հորմուզի նեղուցով: Պարսից ծոցի հարավում գտնվող բոլոր ամերիկյան ռազմական բազաները մոտ ժամանակներս կանջատվեն: Մենք նոր կարգ կհաստատենք», - գրել է Զոլֆաղարին X-ում մայիսի 17-ին: Իրանի դեմ փետրվարի 28-ին սկսված ԱՄՆ-ի եւ Իսրայելի ռազմական գործողությունը եւ Թեհրանի պատասխան գործողությունները խաթարել են մատակարարման շղթաները՝ Հորմուզի նեղուցի արդյունավետ շրջափակման պատճառով: Ապրիլին Միջազգային էներգետիկ գործակալության ղեկավար Ֆաթիհ Բիրոլը զգուշացրել էր Մերձավոր Արեւելքում հակամարտության պատճառով համաշխարհային պարենային ճգնաժամի սպառնալիքի մասին: Նա նշել է, որ նավթի, բնական գազի եւ վառելիքի արտադրության եւ մատակարարման խափանումներից բացի, Պարսից ծոցի երկրներից այլ ապրանքների, հիմնականում՝ պարարտանյութերի պակաս կա:

ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ Է ՓՈԽԱՆՑԵԼ

Իրանը Պակիստանի միջնորդությամբ ԱՄՆ-ին է փոխանցել նոր՝ 14 կետանոց առաջարկ: Այս մասին հայտնել է իրանական բանակցային թիմին մոտ կանգնած աղբյուրը Tasnim գործակալությանը: Աղբյուրի փոխանցմամբ՝ ամերիկյան կողմը վերջերս պատասխան առաջարկ էր ներկայացրել Իրանի նախորդ 14 կետանոց փաստաթղթին, ինչից հետո Թեհրանը փոփոխություններ է կատարել իր դիրքորոշման մեջ եւ նոր տարբերակ ուղարկել Վաշինգտոնին կրկին Պակիստանի միջոցով:

«Իրանը, շարունակելով հաղորդագրությունների փոխանակման վերջին գործելաոճը, փոփոխություններից հետո եւս մեկ անգամ 14 կետանոց տեքստ է ներկայացրել պակիստանցի միջնորդի միջոցով»,- նշել է աղբյուրը:

Ըստ տեղեկությունների՝ Իրանի նոր առաջարկը կենտրոնացած է «պատերազմի ավարտին ուղղված բանակցությունների եւ ամերիկյան կողմի վստահության ամրապնդման քայլերի» վրա:

ՊՈՒՏԻՆԸ ԿՄԱՍՆԱԿՑԻ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը կմասնակցի BRICS գագաթնաժողովին Նյու Դելիում սեպտեմբերի 12-13-ը: Այս մասին լրագրողներին ասել է ՌԴ նախագահի միջազգային հարցերով օգնական Յուրի Ուշակովը: «Այնուհետեւ Չինաստանի նախագահ Սի Ծինփինի հետ նախատեսվում է երկկողմ շփում BRICS գագաթնաժողովում Նյու Դելիում սեպտեմբերի 12-13-ը»,- հայտարարել է Ուշակովը:

ՄԻԼԻՈՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐ

ՈՎ ՈՐՔԱՆ Է ԾԱԽՍՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հրապարակել է 2026 թվականի մայիսի 7-11-ն ընկած ժամանակահատվածում Ազգային Ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքների կազմում ընդգրկված ուժերի բանկային հաշիվների ֆինանսական միջոցների մնացորդների, մուտքերի եւ ելքերի վերաբերյալ տվյալները: ArmLur.am-ը ներկայացնում է ամբողջական ոլորտերը՝ առանց բացառության:

ԿԿՀ-ի հրապարակած տվյալներից երեւում է, որ ամենախոշոր ֆինանսական հոսքերը գրանցվել են «Ուժեղ Հայաստան», «Քաղաքացիական պայմանագիր» եւ «Առաջ աջակենտրոն» քաղաքական ուժերի մոտ:

«Ռեֆորմիստներ» կուսակցությունը մեկ անձից ստացել է 5 հազար դրամ նվիրատվություն: Կուսակցության ելքերը կազմել են 402 հազար դրամ, իսկ մայիսի 11-ի դրությամբ հաշվեհամարի մնացորդը կազմել է 103 հազար դրամ:

«Բոլորին դեմ եմ» ուժը ստացել է 210 հազար դրամ նվիրատվություն երեք անձից: Կատարվել է 171 հազար 500 դրամի այլ ծախս, իսկ մնացորդը կազմել է 101 հազար դրամ:

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունը ստացել է 120 մլն 611 հազար դրամ նվիրատվություն՝124 անձից: Բացի այդ, ունեցել է 1 մլն 30 հազար դրամ այլ մուտք՝ սխալ փոխանցված գումարի վերադարձի տեսքով: Կուսակցության ընդհանուր ելքերը կազմել են 57 մլն 473 հազար 139 դրամ: Դրանցից 8 մլն 452 հազար 55 դրամը ծախսվել է ֆեյսբուքյան էջի գովազդի վրա, 30 մլն դրամը 2026 թվականի մայիսի 8-ին փոխանցվել է նախընտրական հիմնադրամ, իսկ 19 մլն 21 հազար 84 դրամը ներկայացվել է որպես հարկային հաշիվներով կատարված վճարումներ: Նշված է նաեւ 100 հազար դրամ աշխատանքի վարձատրության եւ քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայությունների մատուցման վճարների համար: Մայիսի 11-ի դրությամբ հաշվեհամարի մնացորդը կազմել է 147 մլն 152 հազար 175 դրամ:

«Նոր դարաշրջան» կուսակցությունը ներկայացրել է միայն բանկային հաշվի մնացորդը՝4 մլն 512 հազար 284 դրամ:

«Միավորված հայեր» կուսակցությունը նշված ժամանակահատվածում բանկային հաշիվ չի ունեցել:

«Հայաստանի Շնորհապետական կուսակցությունը» ստացել է 490 հազար դրամ նվիրատվություն 12 անձից, ինչպես նաեւ 46 հազար 500 դրամ անդամավճար՝ 7 անձից: Կուսակցությունը 500 հազար դրամ փոխանցել է նախընտրական հիմնադրամ 2026 թվականի մայիսի 8-ին, իսկ մնացորդը կազմել է 1 մլն 198 հազար 515 դրամ:

«Նոր ուժ ռեֆորմիստական կուսակցությունը» ստացել է 10 մլն 869 հազար 500 դրամ նվիրատվություն՝ 13 անձից: Ընդհանուր ելքերը կազմել են 14 մլն 433 հազար դրամ: Դրանցից 9 մլն 200 հազար դրամը հինգ փոխանցումով փոխանցվել է նախընտրական հիմնադրամ՝ մայիսի 7-ին, 9-ին եւ 11-ին, 4 մլն 491 հազար դրամը ծախսվել է գովազդային ընկերությունների վրա, իսկ 2000 ԱՄՆ դոլարը՝ քարտի համալրման նպատակով: Հաշվեհամարի մնացորդը կազմել է 255 հազար 526 դրամ:

«Միասնության թեւեր» կուսակցությունը ստացել է 34 մլն 550 հազար դրամ նվիրատվություն՝ 8 անձից: Մնացորդը կազմել է 1 մլն 841 հազար 506 դրամ:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը երկու անձից ստացել է 2 մլն 350 հազար դրամ նվիրատվություն, ինչպես նաեւ 100 հազար դրամ սխալ փոխանցման վերադարձ: Ելքերի թվում նշված են 950 հազար դրամ գույքի վարձակալության վճարներ, 15 հազար դրամ պարտավորության մարում եւ 38 մլն 88 հազար 296 դրամ այլ ելքեր:

«Ազգային ժողովրդավարական բեւեռ համահայկական» ուժը կատարել է 15 հազար դրամի պարտավորության մարում, իսկ հաշվեհամարի մնացորդը կազմել է 32 հազար 900 դրամ:

«Քոչարի ազգային վերածնունդ եւ ազգի զարթոնք» ուժի մասով նշված է զրոյական ցուցանիշ:

«Հայ ազգային կոնգրեսը» ստացել է 6 մլն 619 հազար դրամ նվիրատվություն՝19 անձից: Կուսակցության ելքերը կազմել են 4 մլն 780 հազար դրամ, որոնցից 4 մլն 200 հազար դրամը 2026 թվականի մայիսի 8-ին փոխանցվել է նախընտրական հիմնադրամ, իսկ 580 հազար դրամը ծախսվել է գովազդի տեղադրման համար: Հաշվեհամարի մնացորդը կազմել է 5 մլն 530 հազար 197 դրամ:

«Հանրապետություն» կուսակցությունը մեկ անձից ստացել է 5 մլն դրամ նվիրատվություն, ինչպես նաեւ 252 հազար դրամ կրկնակի փոխանցման վերադարձ: Ելքերը կազմել են 1 մլն 916 հազար 500 դրամ, որոնցից 1 մլն դրամը 2026 թվականի մայիսի 11-ին փոխանցվել է նախընտրական հիմնադրամ, իսկ 178 հազար 560 դրամը ծախսվել է ֆեյսբուքյան գովազդի վրա: Մնացորդը կազմել է 6 մլն 609 հազար 250 դրամ:

«Քրիստոնեաժողովրդավարական կուսակցությունը» մեկ անձից ստացել է 200 հազար դրամ նվիրատվություն: Կատարվել է 220 հազար 200 դրամի ծախս՝ բուկլետների տպագրության համար, իսկ հաշվեհամարի մնացորդը կազմել է ընդամենը 3501 դրամ:

«Ալյանս առաջադիմական ցենտրիստական կուսակցության» հաշվեհամարի մնացորդը կազմել է 39 հազար 820 դրամ:

«Ժողովրդավարական համախմբում» կուսակցությունը ստացել է 4 մլն 390 հազար դրամ նվիրատվություն՝ 4 անձից: Կուսակցությունը 3 մլն դրամ փոխանցել է նախընտրական հիմնադրամ, իսկ մնացորդը կազմել է 1 մլն 390 հազար դրամ:

«Դեմոկրատիա, օրենք, կարգապահություն» կուսակցությունը մեկ անձից ստացել է 20 հազար դրամ նվիրատվություն, իսկ հաշվեհամարի մնացորդը կազմել է 31 հազար 600 դրամ:

Ամենախոշոր ֆինանսական շրջանառություններից մեկը գրանցել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը: Այն ստացել է 53 մլն 417 հազար 717 դրամ նվիրատվություն՝ 79 անձից, 1 մլն 232 հազար 15 դրամ անդամավճար՝ 97 անձից, ինչպես նաեւ 450 հազար դրամ սխալ փոխանցման վերադարձ: Կուսակցության ծախսերը ներառել են 20 մլն 271 հազար 633 դրամ գույքի վարձակալության վճարներ, 450 հազար 852 դրամ կոմունալ վճարներ, 57 հազար 982 դրամ ապրանքանյութական արժեքների ձեռքբերում եւ 221 մլն 951 հազար 620 դրամ այլ ելքեր: Այդ գումարից 15 մլն դրամը ծախսվել է գովազդային ծառայությունների համար: Մայիսի 11-ի դրությամբ կուսակցության հաշվեհամարի մնացորդը կազմել է 130 մլն 941 հազար 461 դրամ:

ՀՅԴ-ն ստացել է 43 մլն դրամ նվիրատվություն՝ 15 անձից, ինչպես նաեւ 70 հազար դրամ գույքի վարձակալության վճարի մուտք: Հաշվեհամարի մնացորդը կազմել է 43 մլն 581 հազար 772 դրամ:

«Առաջ աջակենտրոն» կուսակցությունը ստացել է 57 մլն 790 հազար դրամ նվիրատվություն՝14 անձից, ինչպես նաեւ 880 հազար դրամ սխալ փոխանցման վերադարձ: Ելքերը կազմել են 11 մլն 664 հազար դրամ գույքի վարձակալության վճարների եւ 65 մլն 70 հազար 442 դրամ այլ ելքերի տեսքով: Մնացորդը կազմել է 10 մլն 628 հազար 437 դրամ:

«Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինքը» ստացել է 21 մլն դրամ նվիրատվություն՝ 14 անձից, ինչպես նաեւ 2 մլն դրամ նախընտրական հիմնադրամից վերադարձված գումար: Ելքերը կազմել են 25 մլն 501 հազար 506 դրամ, իսկ մնացորդը՝498 հազար 614 դրամ:

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը ստացել է 5 մլն 300 հազար դրամ նվիրատվություն՝ 4 անձից: Կուսակցությունը 15 մլն 60 հազար 131 դրամ փոխանցել է նախընտրական հիմնադրամ, իսկ հաշվեհամարի մնացորդը կազմել է 6 մլն 54 հազար 381 դրամ:

Հրապարակված տվյալները փաստում են, որ նախընտրական գործընթացի մեկնարկին զուգահեռ քաղաքական ուժերը հիմնականում կենտրոնացել են նախընտրական հիմնադրամների համալրման, գովազդային արշավների եւ կազմակերպչական ծախսերի վրա:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՊԵԿ

ՓՈՐՁԵԼ ԵՆ 28 ԿԳ ՀԱՇԻՇ ԲԵՐԵԼ

Պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչությունը շարունակում է հետեւողական պայքարը ՀՀ պետական սահմանով թմրամիջոցների մաքսանենգության, ինչպես նաեւ Հայաստանի տարածքը որպես թմրամիջոցների տարանցիկ երթուղի օգտագործող հանցավոր խմբավորումների բացահայտման ուղղությամբ:



Օրերս «Ագարակ» սահմանային անցման կետ է ժամանել Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ջ. Ծ.-Ի կողմից շահագործվող բեռնատար տրանսպորտային միջոցը: Ըստ ներկայացված բեռնափոխադրման փաստաթղթերի՝ մեքենան պետք է տեղափոխեր շինարարական սալիկներ, իսկ բեռի վերջնական նշանակման վայրը եղել է Վրաստանը: Հայաստանի Հանրապետությունը տվյալ երթուղում պետք է օգտագործվեր որպես տարանցիկ գոտի: Մաքսային հսկողության շրջանակում բեռնատարը ենթարկվել է ռենտգեն զննության: Նախնական ստուգման ընթացքում կասկածելի պատկերներ կամ թաքցված բեռի առկայություն չի արձանագրվել: Մաքսային հսկողությունը շարունակվել է ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական բաժնի վարժեցված շան միջոցով: Բեռնատարի կցորդի աջ եւ ձախ հատվածներում շունը ցուցաբերել է թմրադեղեր հայտնաբերելու վարքագիծ: Որոշում է կայացվել տրանսպորտային միջոցը առավել մանրամասն զննության նպատակով տեղափոխել հարավային տերմինալ մաքսային պահեստ:

ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության եւ պետական սահմանի անցման կետերում մաքսային հսկողություն իրականացնող ստորաբաժանումների աշխատակիցները, կիրառելով հատուկ տեխնիկական միջոցներ, ապամոնտաժել են կցորդի մետաղական հատվածները: Արդյունքում հայտնաբերվել են հատուկ պատրաստված եւ զոդված գաղտնարաններ, որոնցում թաքցված է եղել շուրջ 28 կիլոգրամ ընդհանուր քաշով 111 հատ առանձին փաթեթներով «հաշիշ» տեսակի թմրամիջոց:

Թմրամիջոցների մաքսանենգություն իրականացնելու հիմնավոր կասկածի առկայության հիմքով ԻԻՀ քաղաքացին ձերբակալվել եւ տեղափոխվել է Սյունիքի մարզային քննչական վարչություն: Հարուցվել է քրեական վարույթ, իրականացվում է նախաքննություն՝ դեպքի բոլոր հանգամանքները, ինչպես նաեւ հնարավոր հանցավոր կապերն ու կազմակերպիչներին պարզելու նպատակով:

Պետական եկամուտների կոմիտեն հորդորում է զերծ մնալ թմրամիջոցների ապօրինի տեղափոխման եւ շրջանառության դրսեւորումներից՝ պահպանելով օրենքի պահանջները եւ նպաստելով հանրային անվտանգության ապահովմանը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐ ԵՆ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում պարզվել է մայիսի 16-ին Գյումրու «Տիրամայր Հայաստանի» կուսաստանից թունավորման ախտանիշներով «Գյումրի» Բ/Կ-ի ինֆեկցիոն բաժանմունք տեղափոխված երեխաների ինքնությունը: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, մայիսի 15-ին՝ ժամը 23:45-ին, տեղեկություններ են ստացվել, որ Անի թաղամասի Չարենցի փողոց 6 հասցեում գտնվող «Տիրամայր Հայաստանի» կուսաստանի թվով 15 սաներ սննդային թունավորում են ստացել եւ «Գյումրի» Բ/Կ-ի ինֆեկցիոն բաժանմունքում ստացիոնար բուժում են ստանում: Ֆոտոլրագրողը հայտնում է, որ համայքային ոստիկաններն ու Շիրակի մարզային քննչական վարչության քննիչները պարզվել են, որ մայիսի 9-ից 14-ն ընկած ժամանակահատվածում «-Սուր աղիքային վարակ» ախտորոշմամբ «Գյումրի» բժշկական կենտրոնի ինֆեկցիոն բաժանմունքում ստացիոնար բուժման են տեղափոխվել «Տիրամայր Հայաստանի» կուսաստանի սաներ, 41 դպրոցի աշակերտներ՝ 7-ամյա Միլենա Ա.-ն, 12-ամյա Գագիկ Ա.-ն, 10-ամյա Լաուրա Ա.-ն, 7-ամյա Գոռ Ղ.-ն, 10-ամյա Էլվերա Ջ.-ն, 10-ամյա Արտյոմ Կ.-ն, 9-ամյա Էդվարդ Գ.-ն, 10-ամյա Էսթեր Գ.-ն, 6-ամյա Մարի Գ.-ն, 9-ամյա Էլեն Ջ.-ն, 11-ամյա Նելլի Մ.-ն, 11-ամյա Մարիամ Կ.-ն, 14-ամյա Լիլյա Հ.-ն, 12-ամյա Մելսիդա Գ.-ն եւ 6-ամյա Ալեքս Բ.-ն:

ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում պարզվել է, որ 2026 թվականի մայիսի 9-ին Ա.Օ.-ն ֆեյսբուքյան իր էջում խուլիգանություն կատարելու ուղղակի դիտավորությամբ, տեղեկատվական տեխնոլոգիաներն օգտագործելով՝ 61-ամյա Հ.Մ.-ի քաղաքական հայացքներով պայմանավորված՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը սատարելու դրդապատճառով, վերջինիս լուսանկարը տեղադրելով, անպարկեշտ արտահայտություններ պարունակող տեսանյութ է հրապարակել՝ այդ կերպ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով: Այս մասին տեղեկանում ենք Քննչական կոմիտեից: Ա.Օ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (խուլիգանությունը, որը կատարվել է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով): Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է տնային կալանքը: Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

35 ԴԵՊՔ

Ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի ծառայողները մայիսի 17-18-ին ուժեղացված ծառայություն են իրականացրել մայրաքաղաքում: Կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 1132 արձանագրություն, այդ թվում՝ ոչ սթափ վիճակում վարելու 35, առանց վարորդական իրավունքի վկայականի վարելու՝ 20, չամրակապված վարելու՝ 284, վարելիս ծխելու՝ 164, հեռախոսից օգտվելու՝ 96 եւ այլն: Հանցագործություն կատարելու կասկածանքով ոստիկանության տարածքային բաժիններ է տեղափոխվել 11 անձ, 9-ը՝ թմրամիջոց ապօրինի պահելու, երկուսը՝ սառը զենք կրելու կասկածանքով: Վարչական իրավախախտում կատարելու հիմքով մեկ անձ համայնքային ոստիկանության Կենտրոնական բաժին է տեղափոխվել ոչ սթափ վիճակում հասարակական վայրում գտնվելու համար, եւս մեկ անձ Մալաթիային բաժին է ներկայացվել զենք կրելու կանոնները խախտելու համար: Ուժեղացված միջոցառումները կրում են պարբերական բնույթ:

ԼՈՒՐԵՐ

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ ԵՆ

Քննչական կոմիտեից ArmLur.am-ին հայտնեցին, որ Լոռու մարզում քարոզչություն կատարելուն խոչընդոտելու կասկածանքով 10-ը ձերբակալվածներից 6-ը կալանավորվել է, 1-ի նկատմամբ կիրառվել է տնային կալանք: 3 անձի վերաբերյալ դատական նիստ դեռ չի կայացել:

Ավելի վաղ ՀՀ քննչական կոմիտեն հանդես էր եկել հաղորդագրությամբ, որտեղ նշել էր. «ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից ստացված հաղորդման համաձայն՝ «Ուժեղ Հայաստան» դաշինքի մի խումբ աջակիցներ, տեղեկանալով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից նախապես հայտարարված նախընտրական քարոզարշավի անցկացման վայրի վերաբերյալ, նպատակ ունենալով խոչընդոտել քարոզարշավը, կազմակերպել եւ խոչընդոտել են կուսակցության նախընտրական քարոզչության բնականոն ընթացքը: Մասնավորապես՝ «Ուժեղ Հայաստան» դաշինքի մի խումբ աջակիցներ մայիսի 16-ին Նորաշեն բնակավայրի սկզբնամասում՝ ճանապարհի երթեւեկելի հատվածում, ճանապարհն ավտոմեքենաներով փակելու եղանակով խոչընդոտել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզչության բնականոն ընթացքը:

Բացի այդ, «Ուժեղ Հայաստան» դաշինքի մի խումբ աջակիցներ նույն օրը Մեծավան բնակավայրի Անդրանիկի փողոցի սկզբնամասում գտնվող հրապարակում՝ ճանապարհի երթեւեկելի հատվածում, միացրել են բարձր երաժշտություն, բռնություն են գործադրել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մասնակիցների նկատմամբ՝ այդկերպ խոչընդոտելով քարոզարշավի բնականոն ընթացքը:

Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ Քրեական օրենսգրքի 211-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (մի խումբ անձանց կողմից քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտելը): Քրեական վարույթի շրջանակում 10 անձ ձերբակալվել է»:

ԿԱՐՈՂ ԵՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտնում է. «Սիրելի՛ քաղաքացիներ, երկարատեւ քննարկումներից հետո վարորդական իրավունքից զրկված անձանց առաջարկել ենք հետեւյալը: Վարորդական իրավունքից զրկված անձինք զրկվելուց 1 տարի անց կարող են առանց քննության վերականգնել իրենց իրավունքը՝ վճարելով համապատասխան տուրք: Վերականգնումից հետո սահմանվում է մեկամյա փորձաշրջան: Այդ մեկ տարվա համար վարորդին տրվելու է 6 բալ: Եթե այդ մեկ տարվա ընթացքում վարորդը չի սպառում այդ վեց բալը կամ չի զրկվում վարորդական իրավունքից, ապա հաջորդ տարի կրկին ստանում է 13 բալ, իսկ եթե սպառում է 6 բալը կամ զրկվում է, ապա 1 տարի չի կարող վարել եւ իրավունքը կարող է վերականգնել միայն քննությունների միջոցով: Սիրելի՛ քաղաքացիներ, շուտով իմ այս էջում այս հարցով կտեղադրվի հարցում: Խնդրում եմ արտահայտել Ձեր դիրքորոշումը՝ «կողմ» կամ «դեմ» քվեարկությամբ: Քվեարկությունը կտեւի 48 ժամ»:

● *Մայիսի 11-ից 18-ը մայրաքաղաքում բացահայտվել է ճանապարհային երթեւեկության կանոնների 4544 խախտում:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

ԾՐԱԳԻՐ

«Միասնության թեւերի» վարչապետի թեկնածու Արման Թաթոյանը ներկայացրել է թոշակի անցած մասնագետների ներուժն արդյունավետ օգտագործելու ծրագրային դրույթը՝ կարեւորելով նրանց շարունակական ներգրավվածությունը պետության զարգացման գործում: Արման Թաթոյանի խոսքով՝ այսօր թոշակի անցնելուց հետո պետությունը փաստացի մարդուն հայտնում է, թե նրա առաքելությունն ավարտված է, եւ նա այլեւս անհրաժեշտ չէ պետական համակարգին: Այս մոտեցման հետեւանքով երկար տարիներ պետությանն ու հասարակությանը ծառայած մասնագետները՝ ուսուցիչներ, բժիշկներ, դատավորներ, դատախազներ, նախարարությունների աշխատողներ, ոստիկաններ իրենց զգում են անօգնական եւ ոչ պետքական: «Մենք իրավունք չունենք նման ճոխություն թույլ տալու: Մենք պետք է պետական ծրագրերով նրանց ներգրավենք մեր պետության զարգացման գործին: Օրինակ՝ մի դեպքում կարող ենք կրթական հաստատություններում մեր երեխաների, ուսանողների կրթության հարցում ներգրավել, ասենք, վաստակաշատ մանկավարժի: Անցել է թոշակի, բայց ինչքա՞ն կարող է գիտելիք ու փորձ փոխանցել: Սա նաեւ հնարավորություն կտա, որ սերունդների միջեւ կապը ապահովվի»,- նշել է Թաթոյանը: Նրա առաջարկած ծրագրի համաձայն՝ թոշակի անցած փորձառու մասնագետները կկարողանան պետական հատուկ ծրագրերի միջոցով ներգրավվել կրթական, հանրային եւ մասնագիտական ոլորտներում՝ փոխանցելով իրենց փորձը երիտասարդ սերնդին: *(Գ)*

ՆՈՐ ՍԱԿԱԳԻՆ

Պետություն չի կարող ունենալ իրական անվտանգություն, եթե չի արժեւորում գյուղացու աշխատանքը: Այս մասին Արմավիրում բնակիչների հետ հանդիպմանն ասել է «Միասնության թեւեր» կուսակցության վարչապետի թեկնածու Արման Թաթոյանը: Նա անդրադարձել է գյուղատնտեսությանը վերաբերող մի շարք կարեւոր խնդիրների՝ մասնավորապես, ոռոգման ջրի, գյուղմթերքի մթերման եւ գյուղացու սոցիալական վիճակի հարցերին: «Մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի գյուղացին չունենա խնդիր կապված ոռոգման ջրի հետ: Մեր ծրագրով հստակ ունենք նախատեսած ծրագիր ոռոգման ջրի հետ կապված: Պետք է լինեն ընդամենը սիմվոլիկ գումարներ: Եթե դու ջուր չես տալիս գյուղացուն, ամբողջ տարի էլի չարչարվելու է, մարդն արդյունք չի ունենալու, չի իմանալու ինչ բերք է ստանալու: Դրա համար մենք նախատեսել ենք նվազեցնել ոռոգման ջրի սակագինը գյուղացիների տնամերձ ու ոչ բիզնես նպատակով հողերի համար՝ ոռոգման ջրի գինն ամբողջ սեզոնի համար պետք է լինի կես հետկար՝ 500 դրամ, 1 հա ունեցողինը՝ 1000 դրամ, 2 հա ունեցողինը՝ 2000 դրամ եւ այդպես շարունակ»,- ասել է Արման Թաթոյանը: Նա անդրադարձել է նաեւ գյուղմթերքի մթերման խնդրին՝ նշելով, որ անընդունելի է, երբ գյուղացին իր խնդիրների հետ մնում է միայնակ եւ ստիպված է անհավասար պայմաններում բանակցել խոշոր մթերողների հետ: Արման Թաթոյանն ընդգծել է, որ պետությունը պետք է կանգնի գյուղացու կողքին նաեւ մթերումների կազմակերպման եւ արդար պայմանների ապահովման հարցում: Վարչապետի թեկնածուի խոսքով՝ գյուղատնտեսության զարգացումն ու գյուղացու պաշտպանությունը պետք է դառնան պետական քաղաքականության կարեւոր ուղղություններից մեկը: *(Գ)*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐՎԵԼ Է ՎԱՑԼԱՎ ՀԱՎԵԼԻ ԱՆՎԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ

Աշխարհի տարբեր երկրներից մի խումբ հայտնի իրավապաշտպաններ Ռուբեն Վարդանյանին առաջադրել են Վացլավ Հավելի անվան մարդու իրավունքների 2026թ. մրցանակի:



Առաջադրող խումբը հադես է եկել հայտարարությամբ, որը ներկայացվում է ստորեւ:

Հայտարարություն՝ Ռուբեն Վարդանյանին Վացլավ Հավելի անվան մարդու իրավունքների 2026 թ. մրցանակի առաջադրելու մասին.

«Մենք՝ աշխարհի տարբեր երկրներում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող ներքոստորագրյալներս, հայտարարում ենք, որ հայ մարդասեր Ռուբեն Վարդանյանին առաջադրել ենք Վացլավ Հավելի անվան մարդու իրավունքների 2026 թ. մրցանակի: Այս առաջադրումը հիմք է ընդունում Ռուբենի նշանակալի ներդրումը մարդու իրավունքների պաշտպանության գործում ամբողջ աշխարհում՝ «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության միջոցով, ինչպես նաեւ նրա նվիրվածությունը՝ բարձրաձայնելու իր հայրենակիցների իրավունքների պաշտպանության մասին Լեռնային Ղարաբաղում (Արցախում): Մենք խորապես հավատացած ենք, որ Ռուբեն Վարդանյանն իրավամբ արժանի է այս մրցանակին: Ռուբեն Վարդանյանի, նրա գործընկերներ Նուբար Աֆեյանի եւ Վարդան Գրեգորյանի համահիմնադրած «Ավրորա» մրցանակը հնարավորություն է տվել շարունակել «Ավրորա»-ի դափնեկիրների գործունեությունը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում եւ բառացիորեն հազարավոր կյանքեր փրկել աշխարհի տարբեր երկրներում ու մայրցամաքներում: Ռուբենը հավատում է, որ բարին հավերժ է եւ անմահ, եւ այն ուժեղանում է, երբ բարի գործ ես անում: Նրա շնորհիվ ու աջակցությամբ հնարավոր է եղել շարունակելպաշտպանել դժվարին իրավիճակներում հայտնված-մարդկանց իրավունքները, կյանքը շարունակելու երկրորդ հնարավորություն տալ նրանց: Ռուբենի համար մարդու իրավունքների, արժանապատվության պաշտպանությունը ամեն ինչից վեր է: Այդ իսկ պատճառով մեզ բոլորիս համար ավելի քան հասկանելի էր ծանր վիճակում հայտնված Լեռնային Ղարաբաղի իր հայրենակիցների կողքին գտնվելու նրա որոշումը: Ռուբենն այնտեղ հանդես էր գալիս որպես բնիկ ժողովրդի իրավունքների պաշտպան: Էությամբ ու հավատամքով լինելով պացիֆիստ՝ Ռուբենը վտանգի տակ դրեց իր կյանքն ու ապահով ապագան՝ երկխոսության, բանակցությունների եւ փոխըմբռնման ուղիներ որոնելու համար աշխարհի ամենաբարդ եւ զգայուն հակամարտությանգոտիներից մեկում:

«Մարդկային բանականությունը, արժանապատվությունը, համերաշխությունն ու փոխըմբռնում փնտրելու եւ արդար պայմաններում համատեղ ապրելու պատրաստակամությունը կհաղթեն այն ամենին, ինչ սպառնում է դրանց»: Սրանք Վացլավ Հավելի խոսքերն են՝ ասված 1995 թվականին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի շենքի բացման արարողությանը: Ռուբենը եւս այս գաղափարախոսության ու արժեքների կրողն ու հետեւորդն է: Ուստի մենք խորապես հավատում ենք, որ նրա առանձնահատուկ գործունեությունը լիովին համահունչ է այս մրցանակի ոգուն եւ Վացլավ Հավելի սկզբունքներին: Ճակատագրի հեգնանքով այսօր մարդու իրավունքների ջատագով ու մարդասեր Ռուբեն Վարդանյանն ինքն ունի պաշտպանության կարիք, քանի որ Ադրբեջանի ռազմական դատարանի կողմից շինծու մեղադրանքներով դատապարտվել է քսան տարվա ազատազրկման եւ Լեռնային Ղարաբաղի մի շարք այլ գործիչների հետ ներկայումս պահվում է Բաքվի բանտում: Հավատացած ենք, որ այս մրցանակի շնորհումն արժանի գնահատական կլինի ինչպես Ռուբեն Վարդանյանի բացառիկ ջանքերին, այնպես էլ կարեւոր քայլ կդառնա նրա եւ Բաքվում պահվող մյուս հայ բանտարկյալների ազատ արձակման ուղղությամբ:

Առաջադրող խումբ՝ Վահան Ջանոյան, գրող, թրաֆիքինգի դեմ պայքարի աջակից, գլոբալ էներգիայի հարցերով խորհրդատու Մարգարիտ Բարանկիցե, բուրունդիացի իրավապաշտպան, Maison Shalom խնամքի տան հիմնադիր Թոմ Քաթինա, ամերիկացի բժիշկ եւ մարդասեր, Սուդանի Նուբա լեռներում գործող «Գթության Մայր» հիվանդանոցի հիմնադիր Ջուլիեն Լուսենգե, իրավապաշտպան, մարդասեր, Կոնգոյի Կանանց համերաշխություն հանուն ներառական խաղաղության եւ զարգացման կազմակերպության համահիմնադիր Միրզա Դինայի, իրաքցի եզդի իրավապաշտպան եւ ակտիվիստ, «Luftbrȣcke Irak» կազմակերպության համահիմնադիր

Համառոտ տեղեկանք՝ Վացլավ Հավելի մրցանակի մասին

Հայտնի դարձավ, որ Ռուբեն Վարդանյանն առաջադրվել է Վացլավ Հավելի անվան մարդու իրավունքների 2026թ. մրցանակի: Չեխ լեգենդար գործիչ, Չեխոսլովակիայի վերջին եւ Չեխիայի առաջին նախագահ, թատերագիր, հրապարակախոս եւ իրավապաշտպան Վացլավ Հավելի անվան մարդու իրավունքների մրցանակնամեն տարի շնորհվում է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից՝ Չեխիայի կառավարության, Vnclav Havel Library-ի եւ Charta 77 Foundation-ի համագործակցությամբ:

Մրցանակը հիմնադրվել է եւ շնորհվում է 2013 թվականից՝ նպատակ ունենալով գնահատել անհատների եւ կազմակերպությունների բացառիկ գործունեությունը՝ միտված մարդու իրավունքների պաշտպանությանը: Ուշագրավ է, որ մինչեւ հիմա եղած տասներկու մրցանակակիրներից ինը դատապարտված են եղել կամ դեռ դատապարտված են իրենց գործունեության համար: Մասնավորապես, 2014թ. մրցանակը շնորհվել է ադրբեջանցի դատապարտված իրավապաշտպան Անար Մամադիին, 2022 թ-ին՝ ռուսաստանցի ընդդիմադիր գործիչ , այդ ժամանակ դատապարտված Վլադիմիր Կարա-Մուրզային, 2023 թվականին՝ թուրք բարերար, գործարար, իրավապաշտպան, բանտում գտնվող Օսման Կավալային: 2016թ. մրցանակի է արժանացել եզդի իրավապաշտպան Նադիա Մուրադը, որը նաեւ 2018թ. Նոբելյան խաղաղության մրցանակի դափնեկիրն է: Ըստ մրցանակի կանոնադրության՝ մրցանակակրի անունը հայտարարվում է ամեն տարի սեպտեմբերին Ստրասբուրգում՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանի ժամանակ»:

ՉԻ ԿԱՐՈՂ ՀԱՍԿԱՆԱԼ

Գ.

«Միասնության թեւեր» կուսակցության կառավարման խորհրդի անդամ Դավիթ Անանյանը երեկ պատասխանել է ՔՊ-ական պատգամավոր Վահագն Ալեքսանյանի այն գրառմանը, թե որտեղից Արման Թաթոյանին գումար գրասենյակների վարձակալության ու պաստառների համար: «Ի պատասխան ոմանց.... Երբ մարդը երկար տարիներ ապրել է բացառապես կենցաղային բնազդների, մանր շահերի ու պատեհապաշտ հաշվարկների տրամաբանությամբ, նրա համար իսկապես դժվար է պատկերացնել, որ գոյություն ունեն նաեւ այլ հարաբերություններ՝ վստահության, ընկերության, արժեհամակարգի եւ նվիրումի վրա հիմնված: Այդ պատճառով էլ նման շրջանակների ներկայացուցիչներին անհասկանալի է, թե ինչպես կարող են ընկերները, հարազատներն ու համախոհները սեփական կամքով, սեփական միջոցներով եւ հավատով կանգնել այն մարդկանց կողքին, որոնք պայքարի մեջ են մտել ոչ թե աթոռի, այլ պետության ապագայի համար: Ամեն մարդ աշխարհը չափում է իր պատկերացումներով ու իր կենսակերպի սահմաններում: Եւ եթե որեւէ մեկի քաղաքական ճանապարհը կառուցվել է միայն «կերակրատաշտի» շուրջ պտտվող պատկերացումների վրա, ապա բնական է, որ նա չի կարող հասկանա գաղափարի շուրջ համախմբված մարդկանց ուժը»,- գրել է Դավիթ Անանյանը:

● *Ըստ վիճակագրության՝ բացահայտվել է առանց վարորդական իրավունքի վկայականի 131 անձ:*

ԱԿԲԱ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵԶԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԳՈՐԾԱՐԿԵԼ

Ակբա բանկը եւ ԷՖԵՍ ապահովագրական ընկերությունը ներկայացրել են Հայաստանում եզակի ծառայություն՝ հաշիվների ապահովագրություն, որը հատուցում է կիբեռզեղծարարության հետեւանքով հաճախորդների քարտերի կամ հաշիվների գումարների կորուստը:

Հաշիվների ապահովագրությունն Ակբա բանկի հաճախորդները կարող են իրականացնել acba digital հավելվածի միջոցով՝ ամսական 99 դրամով:

Հաճախորդները սեփական սխալի հետեւանքով հաճախ են թիրախավորվում կիբեռհանցագործների կողմից: Հեռախոսային խարդախությունները, քարտային կամ անձնական տվյալների հափշտակությունը, կեղծ կայքերով կատարվող վճարումները, սոցիալական ճարտարագիտությունը, շանտաժն ու սպառնալիքը հիմնական այն ռիսկերն են, որոնց բախվում են հաճախորդներն ու տրամադրում տվյալներ՝ դառնալով զեղծարարության զոհ:

«Երբեմն հաճախորդների սխալի հետեւանքով կիբեռզեղծարարները հասանելիություն են ստանում նրանց բանկային հաշիվներին եւ գումարներ շորթում: Այս նոր պրոդուկտը հենց այսպիսի դեպքերի համար է, որպեսզի մենք կարողանանք ծածկել այդ վնասների կորուստը»,- նշել է Ակբա բանկի մանրածախ բիզնեսի տնօրեն Նորիկ Նազարյանը:

«Ակբա բանկի հետ երկար քննարկումների արդյունքում գործարկեցինք այս պրոդուկտը: Հաշիվների ապահովագրության միջոցով հնարավոր է ապահովագրել մարդկանց բոլոր տեսակի հաշիվները՝ անկախ նրանից՝ այդ հաշիվն ընթացիկ է, խնայողական, դեպոզիտի, թե քարտային:

Պայմանագիրը շատ արագ է ձեւակերպվում. պետք չէ այցելել ո՛չ բանկի մասնաճյուղ, ո՛չ ապահովագրական ընկերություն. ուղղակի պետք է մուտք գործել բանկի հավելված եւ 2-3 հպումով ակտիվացնել հաշիվների ապահովագրության պայմանագիրը»,- նշել է ԷՖԵՍ ապահովագրական ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Արեւշատ Մելիքսեթյանը:

Ակբա բանկը կիրառում է կիբեռանվտանգության բազմաշերտ պաշտպանություն՝ հաճախորդների ֆինանսական անվտանգության բարձր մակարդակ ապահովելու նպատակով: Նոր ծառայությունը պաշտպանության լրացուցիչ շերտ է, որը նվազեցնում է կիբեռհանցագործությունների ազդեցությունը եւ ապահովագրում կիբեռզեղծարարության հետեւանքով առաջացող հնարավոր վնասները:

Ակբա բանկը եւ «ԷՖԵՍ» ԱՓԲԸ-ն վերահսկվում են ՀՀ ԿԲ կողմից (Գ)

«KOREEZ-TELCELL-PHYSMATH» Գ

ԱՎԵԼԻ ՔԱՆ 15,000 ԱՇԱԿԵՐՏ

Մայիսի 16-ին ու 17-ին ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցում կայացավ «Koreez-Telcell-PhysMath» համահանրապետական մաթեմատիկական մրցույթի կիսաեզրափակիչ փուլը:

Այս տարվա մրցույթն աչքի ընկավ անանախադեպ մասշտաբով՝ ընդգրկելով ավելի քան 15,000 աշակերտ ինչպես Երեւանից, այնպես էլ Հայաստանի բոլոր 10 մարզերից:

Առաջին երկու առցանց փուլերի արդյունքում կիսաեզրափակիչ փուլ անցավ շուրջ 800 լավագույն աշակերտ: Իր ինտենսիվությամբ աչքի ընկած կիսաեզրափակիչ փուլն իրականացվեց առկա տարբերակով, Ա. Շահինյանի անվան Ֆիզմաթ դպրոցում:

Մրցակցություն, որը տեւեց ամբողջ երկու օր

Կիսաեզրափակիչ փուլն անցկացվեց մայիսի 16-ին եւ 17-ին՝ առավոտյան 10:30-ից մինչեւ 18:00-ն: Այդ ընթացքում տարբեր տարիքային խմբերի աշակերտները հերթափոխով մասնակցեցին իրենց դասարանի համար նախատեսված մրցույթին:

Յուրաքանչյուր մասնակից ուներ 90 րոպե՝ իր գիտելիքները, տրամաբանական մտածողությունն ու բարդ, բայց հետաքրքիր խնդիրներ լուծելու ունակությունները ապացուցելու համար:

Մասնակիցները պայքարում էին մայիսի 30-ին կայանալիք եզրափակիչ փուլ անցնելու համար, որը նախատեսված է յուրաքանչյուր տարիքային խմբից միայն լավագույն 10 աշակերտների համար:

Կրթական շարժում, որը միավորում է ամբողջ Հայաստանը

Koreez կրթական ծրագրի հիմնադիր Սուրեն Ալոյանը նշում է, որ այս տարվա արդյունքներն արդեն խոսում են նախաձեռնության ազդեցության մասին:

«Ավելի քան 15,000 մասնակից ունենալը նշանակում է, որ մենք ոչ միայն մրցույթ ենք կազմակերպում, այլ կազմակերպում ենք իրական կրթական շարժում: Այս երեխաները այսօր խնդիրներ չեն լուծում, նրանք ձեւավորում են իրենց մտածողությունը, հավատքն իրենց ուժերի ու ապագայի հանդեպ»:

Ռազմավարական գործընկերություն հանուն ապագայի

Telcell-ի գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանն ընդգծում է, որ նման նախաձեռնությունները կարեւոր ներդրում են երկրի զարգացման համար: «Մաթեմատիկան հանդիսանում է տեխնոլոգիական աշխարհի հիմքը: Մենք կարեւորում ենք այնպիսի ծրագրերը, որոնք զարգացնում են վերլուծական մտածողություն եւ պատրաստում ապագա մասնագետների: «Koreez-Telcell-PhysMath» մրցույթը հենց այդպիսի հարթակ է, որտեղ ձեւավորվում են վաղվա տեխնոլոգիական առաջնորդները»:

Տաղանդների բացահայտում ամենավաղ տարիքից

Ֆիզմաթ դպրոցի տնօրեն Արման Սարգսյանն իր հերթին նշում է, որ մրցույթը հնարավորություն է տալիս բացահայտել ամենատաղանդավոր աշակերտներին ամբողջ երկրից:

«Այսպիսի մրցույթները մեզ հնարավորություն են տալիս տեսնել այն աշակերտներին, որոնք ունեն խորքային մաթեմատիկական մտածողություն: Մենք համոզված ենք, որ նրանցից շատերը ապագայում կդառնան գիտության եւ տեխնոլոգիայի ոլորտի առաջատարներ»:

Կազմակերպիչների համոզմամբ՝ «Koreez-Telcell-PhysMath» մրցույթը ոչ միայն գնահատում է աշակերտների գիտելիքները, այլեւ ձեւավորում է նոր, ժամանակակից մտածողություն, որտեղ մաթեմատիկան դառնում է ապագայի հաջողության լեզու: Մրցույթի եզրափակիչ փուլը կկայանա մայիսի 30-ին, որի արդյունքում հայտնի կդառնան այս տարվա հաղթող մասնակիցները:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ ընկերությունը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԱՅԻՆ ՔԱՐՏ ԱՆՎՃԱՐ՝ ԱՌՑԱՆՑ Գ

Յունիբանկում այսուհետ հնարավոր է անվճար պատվիրել աշխատավարձային քարտ՝ դիմելով առցանց: Նոր ծառայությունը հնարավորություն է տալիս դիմել Arca աշխատավարձային քարտի համար ցանկացած հարմար ժամանակ՝ լրացնելով առցանց հայտն ընդամենը մի քանի րոպեում: Դրա համար անհրաժեշտ է անցնել Յունիբանկի կայքում տեղադրված հղումով կամ գործընկեր ընկերություններին տրամադրված QR կոդով, սեղմել «Պատվիրել քարտ» կոճակը եւ անցնել նույնականացման գործընթացը:

Քարտի համար դիմելիս՝ անհրաժեշտ է ունենալ անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ ID) եւ անցնել կենսաչափական նույնականացում՝ հետեւելով համակարգի պարզ հրահանգներին: Քարտն անվճար կառաքվի նշված այլ հասցեով կամ բանկի մասնաճյուղ:

Աշխատավարձային քարտի առցանց պատվիրման գործարկումը Յունիբանկի հերթական քայլն է թվային ծառայությունների զարգացման եւ ավելի հասանելի դարձնելու ուղղությամբ: Arca քարտը հնարավորություն է տալիս ստանալ 2% հետվճար (քեշբեք) անկանխիկ գործարքների համար: Հետվճարը տրամադրվում է 1 000 ՀՀ դրամը գերազանցող գործարքների դիմաց՝ ինքնաշխատ եղանակով մինչեւ հաջորդ ամսվա 25-ը: Մեկ գործարքի համար տրամադրվող հետվճարի առավելագույն չափը կազմում է 6 000 ՀՀ դրամ, իսկ ամսական առավելագույն չափը՝ 60 000 ՀՀ դրամ:

Քարտապանները կարող են նաեւ ստանալ աշխատավարձի մինչեւ 15-ապատիկի չափով վարկային գիծ, օգտվել մոբայլ հավելվածից, SMS ծանուցումների ստացման հնարավորությունից: Յունիբանկում գործում է քարտապանների սպասարկման շուրջօրյա ծառայություն: Բացի այդ, Յունիբանկի աշխատավարձային քարտի հետ տրամադրվում են կուպոններ՝ ընտանիքի անդամների համար մինչեւ երեք անվճար բազմարժութային քարտ ձեւակերպելու հնարավորությամբ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱԿԲԱ ԲԱՆԿ

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է «ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» 2026Թ. ԾՐԱԳԻՐԸ

Ակբա բանկը եւ «Հանուն մարդկության եւ բնության» հայկական ասոցիացիան (FPAN) մեկնարկում են «Օրգանական գյուղատնտեսության զարգացման» 2026թ. ծրագիրը:

Ծրագիրը ֆինանսավորվում է Ակբա բանկի եւ Գերմանիայի բնության պահպանության միության (NABU) կողմից: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացմանը՝ տնտեսվարողների համար հնարավորություն ստեղծելով անցնել օրգանական սերտիֆիկացման գործընթաց, ստանալ հավաստագիր եւ զարգացնել արտադրական եւ արտահանման կարողությունները: Մրցույթի շրջանակում ընտրված կազմակերպությունները, ֆերմերներն ու գյուղատնտեսները կստանան համակցված ֆինանսական եւ տեխնիկական աջակցություն:

Ովքե՞ր կարող են դիմել

- Օրգանական արտադրությամբ զբաղվող տնտեսվարողները,
- Օրգանական արտադրության անցում նախատեսող տնտեսվարողները:

Ֆինանսական աջակցություն

- Օրգանական սերտիֆիկացման համաֆինանսավորում (առավելագույնը՝ մինչեւ 400,000 ՀՀ դրամ): Սերտիֆիկացման ընդհանուր արժեքի մնացած մասը հոգում է շահառուն: Հայտերն ընդունվում են մինչեւ 2026 թվականի հունիսի 15-ը ներառյալ:

Լրացնել դիմում-հայտը:

«Օրգանական գյուղատնտեսության զարգացման» ծրագիրը մեկնարկել է 2015 թվականին՝ Ակբա բանկի եւ NABU-ի համագործակցությամբ: 2026 թվականից ծրագրի իրականացումը շարունակվում է «Հանուն մարդկության եւ բնության» հայկական ասոցիացիայի (FPAN) կողմից՝ Ակբա բանկի հետ համագործակցությամբ: Ծրագիրն այժմ ներառում է ավելի քան 100 շահառու ամբողջ Հայաստանի տարածքում:

Նախագիծը համապատասխանում է ՄԱԿ-ի Կայուն զարգացման 17 նպատակներից 4-ին՝

- Զրոյական սով (SDG 2: Zero Hunger)
- Պատասխանատու սպառում եւ արտադրություն (SDG 12: Responsible Consumption and Production)
- Կյանք ցամաքում (SDG 15: Life on Land)
- Գործընկերություն հանուն նպատակների (SDG 17: Partnerships for the Goals)

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել FPAN-ի գրասենյակ (հեռ.՝ +37493420062, +37444599949) կամ գրել info@fpan.am էլեկտրոնային հասցեին:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ՖԱՍԹ ԲԱՆԿ

ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ

Ֆասթ Բանկն սկսել է գործակցել Հայաստանի Գրեփլինգի Ֆեդերացիայի հետ որպես գլխավոր հովանավոր: Այս գործակցությունը կարեւոր խթան է առաջիկա գրեփլինգի, պանկրատիոնի եւ սիրողական ՄՄԱ-ի Եվրոպայի առաջնության նախաշեմին:

ՓՄՁ բիզնեսի կառավարման տնօրեն-տնօրինության անդամ Արտավազդ Թառոյանն ընդգծել է, որ այս հովանավորչությունը միտված է խրախուսել մեր մարզիկներին. «Գրեփլինգ մարզաձեւի մեր ներկայացուցիչները մեծ ներուժ ունեն եւ լավագույնս դրսեւորել են իրենց տարբեր առաջնություններում: Ֆասթ Բանկի աջակցությունը միտված է քաջալերելու մեր տաղանդավոր ըմբիշներին, եւ մենք վստահ ենք, որ շարունակական աշխատանքների եւ աջակցության շնորհիվ կհասնենք հաղթանակների», - ասել է նա:

Հավելենք, որ սույն թվականի մայիսի 24-ից 31-ը Հայաստանն առաջին անգամ հյուրընկալելու է UWW (United World Wrestling) միջազգային կազմակերպության պաշտոնական Եվրոպայի առաջնությունը: Հայաստանի հավաքականը մասնակցելու է իր ողջ կազմով՝ մինչեւ 15 տարեկանների , 17 եւ 20 տարեկանների, մեծահասակների մրցաշարերում:

Հայաստանի Գրեփլինգի Ֆեդերացիայի նախագահ Սարգիս Բազինյանը նշել է. «Մենք գնահատում ենք մեր գործընկերներին՝հանձինս Ֆասթ Բանկի, որը մեր կողքին է եւ դարձնում է այս առաջնությունը հնարավոր, եւ իհարկե կուզեմ նշել, որ առաջին անգամ Հայաստանի պատմության մեջ մենք հյուրընկալել ենք Եվրոպայի առաջնության միաժամանակ տարբեր ուղղություններ, այն է՝ գրեփլինգ, պանկրատիոն եւ սիրողական խառը մենամարտեր»:

Ի դեպ, Հայաստանի Գրեփլինգի Ֆեդերացիան գործում է 2020 թվականից, այս ընթացքում Հայաստանի ներկայացուցիչները հասցրել են 72 մեդալ նվաճել աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում:

Ֆասթ Բանկը շարունակաբար ներդրումներ է կատարում Հայաստանում ամենատարբեր մարզաձեւերի զարգացման ուղղությամբ եւ վերջին շրջանում մի շարք գործակցության պայմանագրեր է կնքել տարբեր ակումբների հետ:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)

ԲԱՆԿԵՐ

15% ՔԵՇԲԵՔ Է ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Ֆասթ Բանկը Yerevan Mall-ի կողմից իրականացվող «Family Shopping weekend»-ի շրջանակներում իր հաճախորդներին տրամադրում է 15% քեշբեք: Ֆասթ Բանկի քարտապանները սույն թվականի մայիսի 15-17-ը Yerevan Mall-ի վաճառակետերում եւ ժամանցի վայրերում, բացառությամբ սննդի կետերի եւ Նավապետ Քիդի ժամանցի կենտրոնի, Բանկի քարտով գնումներ կատարելու դեպքում կստանան 15% քեշբեք, բայց ոչ ավելի քան 10 հազար դրամը՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը: Հաճախորդը գումարի հետվերադարձից կարող է օգտվել մեկ անգամ իր բոլոր քարտերով հանրագումարային գնումների դիմաց:

Քեշբեքի հնարավորությունից կարող են օգտվել Ֆասթ Բանկի բոլոր քարտապաններն անկախ քարտատեսակից: Արտարժույթային քարտերի դեպքում իրականացված գործարքների քեշբեքի հաշվարկը կատարվելու է քարտի արժույթը փոխակերպած դրամի՝ հաշվեգրման օրվա համար սահմանված ՀՀ ԿԲ փոխարժեքով:

Հավելենք նաեւ, որ Yeravan Mall-ի Նավապետ Քիդի մանկական ժամանցի կենտրոնում Ֆասթ Բանկի քարտերով իրականացրած յուրաքանչյուր 5 հազար ՀՀ դրամ լիցքավորման դեպքում քարտապանին կտրամադրվի բոնուս 1000 ՀՀ դրամի չափով:

Գումարի հետվերադարձն իրականացվելու է «Family Shopping weekend»-ի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում: Այն հաճախորդները, ում քարտերը քեշբեքի վճարման պահին փակ կլինեն կամ իրականացրած կլինեն ապրանքի վերադարձ (refund), գումարի հետվերադարձ չեն ստանա: Yerevan Mall-ում քեշբեքի հնարավորությամբ վաճառակետերի ցանկին եւ այլ մանրամասներին ծանոթանալու համար անհրաժեշտ է անցնել հետեւյալ հղումով:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ՇԱԲԱԹ ԵՎ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԻՆ ԳՈՐԾՈՒՄ Է 50% ԶԵՂՉ

Յունիբանկն իրականացնում է հատուկ ակցիա, որի շրջանակում շաբաթ եւ կիրակի օրերին կարելի է ձեւակերպել Visa եւ Mastercard քարտեր 50% զեղչով:

Ակցիան գործում է բանկի «Դալմա» եւ «Գարեգին Նժդեհ» մասնաճյուղերում, որոնք գտնվում են համապատասխանաբար Dalma Mall եւ Yerevan Mall առեւտրի կենտրոններում: Զեղչը կիրառվում է քարտի տրամադրման սակագնի նկատմամբ:

Ակցիայի շրջանակում 50% զեղչով հնարավոր է ձեւակերպել Arca, Visa Classic, Visa Gold, Visa Signature, Visa Infinite, Visa U-Teenager, Visa նվեր քարտերը, ինչպես նաեւ Mastercard Standard, Mastercard Gold, Mastercard World «Travel» եւ Mastercard World Elite քարտերը:

Arca քարտերով անկանխիկ գործարքներ կատարելու դեպքում քարտապանը ստանում է 2% հետվճար: Հետվճարը տրամադրվում է 1 000 ՀՀ դրամը գերազանցող գործարքների դիմաց՝ ինքնաշխատ եղանակով մինչեւ հաջորդ ամսվա 25-ը:

Մեկ գործարքի համար տրամադրվող հետվճարի առավելագույն չափը կազմում է 6 000 ՀՀ դրամ, իսկ մեկ ամսվա համար՝ 60 000 ՀՀ դրամ:

Յունիբանկի բազմարժութային քարտերն ապահովում են հարմար եւ անվտանգ սպասարկում թե՛ առօրյա վճարումների, թե՛ ճանապարհորդությունների ընթացքում:

«Դալմա» մասնաճյուղը շաբաթ եւ կիրակի օրերին գործում է 12:30-ից մինչեւ 20:30-ը:

Հասցեն՝ Երեւան, Ծիծեռնակաբերդի խճուղի 3, Dalma Mall:

«Գարեգին Նժդեհ» մասնաճյուղը շաբաթ օրերին հաճախորդներին սպասարկում է 11:15-ից մինչեւ 21:30:

Հասցեն՝ Երեւան, Արշակունյաց պողոտա 34/3, Yerevan Mall:

Ակցիան նախատեսված է ռեզիդենտ հաճախորդների համար եւ գործում է մինչեւ 2026 թվականի հունիսի 30-ը:

● *Հովհաննես Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում մայիսի 24-ին՝ ժամը 17:00-ին, կկայանա «Մադագասկար» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ բողոքներ չեն քննարկվում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից:

Ալբերտ Հակոբյան, 65 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք

պետք է լուծվեն միայն դատական կարգով,

վերաբերում են ոչ պետական մարմինների եւ կազմակերպությունների գործողությունների հետեւանքով մարդու իրավունքների խախտումներին,

ներկայացվել են մեկ տարուց ավելի ուշ այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների խախտման մասին,

Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքով մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման մասին չեն վկայում,

անանուն են կամ չեն պարունակում դիմողի անունը, ազգանունը, բնակության վայրը (հասցեն), հեռախոսահամարը կամ իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձեւը եւ գտնվելու վայրը,

պահանջ չեն պարունակում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պաշտպանը դադարեցնում է բողոքի քննարկումը, եթե քննարկումը սկսելուց հետո շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացրել դատարան:

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Արդյո՞ք առկա են հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվերներ ստանալու հետ կապված սահմանափակումներ: Ի՞նչ իրավական ակտով են դրանք սահմանվում:

Հերմինե Վարդանյան, 55 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Նվերների ընդունման սահմանափակումների ինստիտուտը բարեվարքության համակարգի առանցքային բաղադրիչներից է, որը, ինչպես եւ մյուս տարրերը, նպատակ ունի կանխելու հնարավոր շահերի բախման իրավիճակների առաջացումը եւ պաշտոնեական պարտականությունների նկատմամբ ազդեցությունը: Նվերների ընդունման սահմանափակումները նախատեսված են «Հանրային ծառայության մասին» օրենքով, որը կարգավորում է թույլատրելի նվերների ստացման, հաշվառման, հանձնման հետ կապված հարաբերությունները եւ նախատեսում արգելք՝ ոչ թույլատրելի՝ պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ստացման դեպքերի համար:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն, իր հերթին, լիազորված է հետեւելու նվերների ընդունման սահմանափակումների պահպանմանը եւ նվերների հաշվառման գործընթացը համակարգելուն:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Խոշոր ավտովթար Երեւանում. Դավիթ Անհաղթ զբոսայգու դիմաց բախվել են «Mercedes Maybach»-ը եւ «Hongqi»-ն, «Maybach»-ը բախվել է կայանված «Toyota»-ին. կան վիրավորներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 1 + 6 + 10 + 15
Կոտայքի լեռներ	+ 2 + 6 + 10 + 14
Կոտայքի նախալեռներ	+ 7 + 9 + 15 + 18
Գեղարքունիք	+ 1 + 6 + 10 + 14
Լոռի	+ 3 + 7 + 13 + 17
Տավուշ	+ 4 + 7 + 14 + 17
Արագածոտնի լեռներ	+ 1 + 5 + 10 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 6 + 10 + 14 + 19

Արարատ	+ 8 + 11 + 18 + 21
Արմավիր	+ 8 + 12 + 19 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 + 10 + 13
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 12 + 19 + 22
Սյունիքի լեռներ	+ 2 + 5 + 9 + 13
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 + 15 + 18
Սյունիքի հովիտներ	+ 9 + 13 + 22 + 25
Երեւան	+ 9 + 11 + 18 + 20

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.05.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*